ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆ
1884-1915



ՀԵԹԱՆՈՍ ԵՐԳԵՐ

1912 թ. լույս տեսավ **Դանիել Վարուժանի** *«Հեթանոս երգեր»* ժողովածուն, որը բաղկացած է *«Հեթանոս երգեր», «Գողգոթայի ծաղիկներ»* շարքերից և *«Հարճը»* քնարաէպիկական պոեմից:

Շարքերում բանաստեղծն արձագանքում է իր օրերի ամենացավոտ հարցերին՝ անողոք քննադատության ենթարկելով դարի բարոյական ախտերը:

«Հարճը» պոեմի նյութը հեղինակը վերցրել է Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» աշխատությունից: Վարուժանն անդրադարձել հեթանոսական ժամանակների իրականությանը և նկարագրել մ. թ. 1-ին դարի դեպքերը. նրա համար ատելի էին իր ժամանակաշրջանի բարքերը, որտեղ սերն անգամ կարող էր շատ էժան գնվել: Բանաստեղծն ուզում է իսկական զգացմունքներ ու հույզեր նկարագրել՝ դրանց միջոցով հակադրություն ստեղծելով իրականի ու շինծուի միջև: Բանաստեղծի համար հոգու պահանջ էր անդրադարձն այն ժամանակներին, երբ պետականություն ունեցող հայոց աշխարհում իշխում էին ուժը, զորությունը, համարձակությունը: Պոեմում բացառիկ գույներով են ներկայացված վառ անհատականությունները, նրանց զգացմունքների խորությունն ու իրենց սիրած էակին տիրանալու կրքոտ վճռականությունը, ինչպես նաև սիրո դրաման:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ուսումնասիրիր բանաստեղծի «Հեթանոս երգեր» ժողովածուն, ներկայացրու կառուցվածքը:
2. Ներկայացրու ժողովածուի ստեղծման շարժառիթներն ու նպատակները:
3. Կարդա՛ «Հեթանոս երգեր» և «Գողգոթայի ծաղիկներ» շարքերի բանաստեղծությունները:
4. Դիտիր «Շողակաթ» ընկերության տեսաֆիլմը՝ նվիրված «Հեթանոս երգեր» շարքին, որտեղ կունկնդրես նաև «Նավասարդյան» բանաստեղծությունն ու կլսես նրա ստեղծման պատմությունը:
5. Ներկայացրու Վարուժանի անդրադարձը հեթանոսությանը, մեկնաբանիր դրդապատճառներն ու նպատակները. կարդա՛ «Նավասարդյան» բանաստեղծությունը, բացատրիր նրա դերը հեթանոսական շարժման ժամանակ:
6. Մեկնաբանիր «Նավասարդյան» բանաստեղծությունը, ներկայացրու գաղափարը: Բացատրիր հեղինակի կողմից հեթանոսական շարժման բովանդակության ընկալումը որպես ազգային վերածննդի ակնկալիք:

ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

Հանճա՛րդ Հայկյան, Նավասարդյան սա տոներուն
Արևափառ,
Ա՛լ վերածնե փլատակներեն և փառագոչ
Քնարդ ա՛ռ:

Հանու՛ն Ույժին, հանու՛ն Գեղին, մտիր մեհյանն
Աստվածներուն.
Ջահը ձեռքիդ՝ բագնե բագին համասփռե
Հուր ու արյուն:
Եվ բարձրացուր Անահիտի ծիծերն ի վեր
Բաժակդ նուռ,
Հետո զոհվող քերթողներուն սրտին վրա
Լեցու՛ր, լեցու՛ր:

Զի մենք, հանուն Սերին, Սերմին, քու հին Ցեղիդ

Մարմարեն կույս,
Մե՛նք, Զավակներդ Օգոստափառ, պիտի կերտենք
Նո՜ր Արշալույս:

7. Ներկայացրու բանաստեղծի արժեհամակարգը:
8. Բացատրիր, թե որ ժամանակով է գրված բանաստեղծությունը, ինչն է դրա պատճառը:
9. Գտիր բանաստեղծության մեջ գործածված պատկերավորման միջոցները, դուրս գրիր առանձին սյունակներով:
10. Ուսումնասիրիր բանաստեղծության լեզուն, ցույց տուր լեզվի դերը հույզեր փոխանցելու հարցում:
11. Զեկուցում պատրաստիր Անահիտ աստվածուհու մասին, ներկայացրու դասարանում:
12. Կարդա՛ «Բանվորուհին» և «Մեռնող բանվոր» բանաստեղծությունները: Ներկայացրու «Հեթանոս երգեր» և «Գողգոթայի ծաղիկներ» շարքերի հակադրությունը, բանվորական ծանր կյանքի ճշմարտացի պատկերումը «Գողգոթայի ծաղիկներ» շարքում:
13. Մեկնաբանիր գրողի վարպետությունը գաղափար արտահայտելու և զգացմունքներ փոխանցելու հարցում:
14. Կարդա՛ «Հարճը» պոեմը, ներկայացրու ստեղծման նախադրյալները:
15. Մեկնաբանիր նյութի ընտրությունը, գաղափարը:
16. Ներկայացրու, պոեմի սյուժեն ու կառուցվածքը:
17. Բացատրիր՝ ինչպես է գրողը ներկայացնում տրված ժամանակաշրջանը, միջավայրը, ինչպես է կերտում պոեմի կերպարները:
18. Ուսումնասիրիր պոեմի լեզուն, ոճը, պատկերավորման միջոցները:
19. Համեմատիր Տրդատի ու Բակուրի կերպարները, ներկայացրու, թե նրանցից ում ես համակրում և ինչու:
20. Նկարագրիր Նազենիկին՝ օգտվելով տրված հատվածների պատկերավորման միջոցներից:

ՀԱՐՃԸ

հատվածներ

«Վարձակն ահա, տեղ բացեք, վարձակը, վարդ տեղացեք.
Մազերուն մէջ, ոտքին տակ մարգարիտիներ լեցուցեք»:
Սանդուխներէն վերնատան վար կ'իջներ կին մը խաժակ.
Կը թրռվռային գըլխուն շուրջ աղավնիներ ըսպիտակ:
Ճաճանչավուխտ քողին մէջ աստղը մ'էր ան՝ որուն մեծ
Աչքերուն մէջ սևեռուն Տըրդատ գինին իր խըմեց:.
Հընչեցուցին երգերն հուսկ մեհենական պարերու,
Սերն հայկազուն կոյսէրուն և հարճերուն գինարբու՝
Որոնք այգվոյն զովալից հովանիին տակ պառկած
Լոյս ծոցն իրենց կը թողուն սեպուհներուն համար բաց:
Կոչնականները համուռ դեպ գուսանները դարձան,
Որոնց մէջտեղ ըսկըսած էր պարել կին մը դեղձան:
Վարձակն էր ան, Նազենիկ, նազելագեղ անունով:
Հասակն ամբողջ կը թըրթռար բարտիի պես հողմախռով.
Դաշներգը իր ջիղերուն դաշներգին հետ լարերուն
Կը միանար, կը սըփռեր համանըվագ մ'հարաճուն:
Յոթն հարճերն հերքը խարտյաշ մատվընրով նախանձոտ
Արաբական իւղի մէջ օծաներ են քաղցրահոտ.
Եվ գըլխուն շուրջը պըսակ մը վարդերու հիւսէր են՝
Որոնք եթէ ճըզմըվին անշուշտ արիւն կը ծորէն:
Կը շողշողան ունկերուն ծայրը օղեր փողփողէջ
Աստղերու նման ցոլալով անրակներուն փոսին մէջ.
Արմունկեն վեր աջ բազուկը կը խաճներ սեղմօրէն
Նուրբ մարգրիտով հելուզուած ապարանջան մ'ոսկեղեն.
Իսկ վիզեն վար մինչև ծայրն ըստինքներուն սևապտուկ
Կը բոլորվի վառ մանյակ մը լոյսէրով հեղեղուկ:
Եվ այնքան նուրբ է զառքաշեն՝ որ կը բըղխե դեպի դուրս
Ազդըրներուն գաղջութիւն և կաթնագոյնը սընդուս.
Մուճակներուն մէջ խարտեշ կաղապարուած ոտքերն ա՛լ
Դռոյթ տալով կը սկըսին հատակին վրայ պար դառնալ…

Վեր կը վերցնե հոլանի բազուկներն իր հուլօրէն
Լայնշի քողին կապուտակ խաղաղութէան ընդմէջեն
Զոյգ մը տոսախ բամբիռները մատերուն մէջ ճարտար
Հանկարծակի կը հընչեն, կ'ըլլան պարին կառավար...

Մարմինն ընդհուպ կը զոփա, կու տան ոտքերը դըռոյթ,
Եվ ան իր իսկ շարժումին անդունդին մէջ հորձանուտ
Կարծես վայրկեան մը այլևըս աչքերե կ'անհետի՝
Ինչպես երկնի մէջ կորսվող լուսադայլայլ մեղեդի:
Օ՜, այդ մեծ պարն հեթանոս՝ որ Աստղիկի կը ձոնեն,
Գեղեցկութէան այդ աղոթքն, աղոթքը այդ մըսեղեն.
Բամբիռներն իր կը հընչեն ձեռքերուն մէջ սաստկօրէն
Իբրև օրենք մարմինին բիւր ձևերուն հոյաշեն...

Ան կը ճախրե՜, կը ճախրե՜, սանձակոտոր կը ճախրե՜...
Հոգվոյն մէջ՝ ծով, շուրջը՝ լոյս, ան Կիպերեան Աստղիկն է՝
Որ իր չորս կողմն հավաքած աղավնիները լուսեղ
Փորձեր կ'ընե թըռչելու ինքն ալ անոնց հետ մեկտեղ,
Եվ հևհևուն, ծիծաղկոտ, վարդի մը պես բըռնըկած,
Վերջին թափով կը սուզի կապոյտին մէջ վերասլաց
Թողլով որ քողն ամպերէն հորձանապտոյտ իյնա վար
Տիոնիսեան բագնին վրայ, գինիին մէջ հըրավառ:

21. Երաժշտական ձևավորում տուր «Հարճը» պոեմին կամ հատվածներին:
22. Դուրս գրիր արևմտահայերեն տասը բառ, գտիր արևելահայերեն համարժեքները:

Արևմտահայերեն	Արևելահայերեն